

ծաղօր թագաւորին Պարսից, Շահ Արասայ, որպէս յայտ արարեալ էր մեզ սիրելի որդին մեր Զաքարիա վարդապետ եթէ խնդրիցես զու ի մէնջ» :

Յաջորդ տարին իսկ փութաց Մելքիսեղեկ կաթողիկոս պատասխանել քահանայապետական համառօտագրին : Այս թուղթը կարեւոր վաւերագիր է նաեւ պատմական տեսակէտով . այս պատճառաւ ալ ամբողջութեամբ կը ներկայացնեմ հոս, թարգմանելով լատին բնագրէ, որ իր կարգին թարգմանութիւն մ'է խտայերէնէ, զոր հոգացած է սկզբնապրի վրայէն Բարդուղիմէոս Արզար¹⁷ :

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿՈՍՒՆ ՀԱՅՈՅ ՄԵԼՔԻՍԵՂԵԿԻ ԱՌՊԱՒՂՈՍ Ե: ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

Աքանչելի, մեծագործ, մեծապայծառ եւ բարձրագոյն գլուխ տիեզերական ամենայն ազգաց, թագաւորաց, իշխանաց, իշխանութեանց եւ համօրէն ամենայն քրիստոնէից զուամարելոց ի փարախ Եկեղեցւոյ, որ է մայր բովանդակ հօտին Քրիստոսի, զոր Պետրոսի, գլխաւորին առաքելոց յանձն արար Քրիստոս ասելով եթէ Արածեա զոչխարս իմ : Ժառանգ եւ ստացիչ ամենասուրբ Գահին, մեծապատիւ Պապ, իշխան Հոռովմայ, փառք ամենայն քահանայապետաց, որ ի բարձրական աթոռ դեմ մեծաւ փառաւորութեամբ դեր ի վերոյ քան

¹⁷ Bzovius, անդ, էջ 207—208. ասկէ քաղուածաբար Azarian, անդ, 122. հմտ. եւ Պալճեան, 161—162: